# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ

# 2022-2023

*Ուսումնական տարվա հաշվետվություն*



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ 03

«ԳԱԶՊՐՈՄ» ՀԲԸ ԴՊՐՈՑՆԵՐ 04

ՆՇԱՆԱԿԱԼԻ ՏԱՐԵԹՎԵՐ 05

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ, ՏԵՍԼԱԿԱՆ և ՆՊԱՏԱԿ 06

ԿԱՌՈՒՑՎԱԾՔ 07

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ 12

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ 13

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 15

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 18

ԿՐԹԱԹՈՇԱԿ 28

ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ 34

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 49

ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ 51

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ 52

ԹԱՏՐՈՆ 53

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ» 54

ՈՒՄՀ ԴՊՐՈՑԻ ԾՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ 55

# ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ



## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրեն*

Կրթության կազմակերպման հիմնական նպատակը սովորողի ինքնազարգացման հնարավորությունների բացահայտումն ու ինքնուրույնության խթանումն է:
Մեր համալիրում ստեղծված են այդ նպատակի իրագործման համար բոլոր անհրաժեշտ պայմանները, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում սովորողի բազմակողմանի զարգացումը:

Գազպրոմ Արմենիայի Ուսումնա-սպորտային համալիրն իր սաներին ընձեռում է ժամանակի հետ համընթաց քայլելու, առողջ և ներդաշնակ զարգացման համար լավագույն հնարավորությունները և մշտապես նրանց կողքին է: Ընդամենը 4 տարում մեր կրթահամալիրը դարձավ ՀՀ-ում մասնավոր հանրակրթական հաստատությունների շրջանում առաջատարներից մեկը՝ իր առանձնահատուկ տեղը զբաղեցնելով դաշտում:

Համատեղ ուժերով իրականացնելու ենք մեր սաներից յուրաքանչյուրի երազանքը. մենք կստեղծենք հնարավորություններ, մեր սաները կլինեն աշխատասեր ու կդառնան լավագույն կրթահամալիրի լավագույն աշակերտները: Միասին բացահայտելու ու զարգացնելու ենք նրանցից յուրաքանչյուրի մտավոր, ֆիզիկական ու ստեղծագործական կարողությունները:



# «ԳԱԶՊՐՈՄ» ՀԲԸ ԴՊՐՈՑՆԵՐ

**Մոսկվա դպրոց**
**1998 թ.**

**Բիշքեկ դպրոց**
**2019 թ.**

**Երևան**
Ուսումնա-սպորտային համալիր
**2019 թ.**

**Սանկտ-Պետերբուրգ դպրոց**
**2021 թ.**

# ՆՇԱՆԱԿԱԼԻ ՏԱՐԵԹՎԵՐ

**16.04.2015** – Հիմնարկեքի արարողություն

**28.12.2018** – Շինարարության ավարտ և շահագործման մեկնարկ

**29.04.2019** – ՀՀ Կադաստրի պետական կոմիտեի կողմից սեփականության վկայականի ստացում

**29.05.2019** – Հիմնարկի ստեղծման վերաբերյալ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տնօրենների խորհրդի որոշում

**14.06.2019** – ՈՒՍՀ կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում

**21.06.2019** – Գրանցում ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում

**10.07.2019** – ՀՀ ԿԳՆ կողմից նախադպրոցական և հանրակրթական ծրագրերի իրականացման լիցենզիաների ստացում

**01.09.2019** – Դպրոցի բացում

**09.09.2019** – Փակ սահադաշտի և լողավազանի շահագործում

**23.09.2019** – Մարզասրահների շահագործում

**11.11.2019** – Մանկապարտեզի բացում

**01.06.2021** – Տարրական և հիմնական դպրոցի առաջին շրջանավարտներ

**01.06.2022** – Ավագ դպրոցի առաջին շրջանավարտներ

**01.09.2023** – Առաջին ռուսական դասարանի բացումը









# ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍՀ առաքելությունը՝ ազատ, ներդաշնակ զարգացող, ստեղծագործ և մտածող անձի ձևավորում:

# ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿ



Տեսլականը՝ Հայաստանի մասնավոր հանրակրթական հաստատությունների շրջանում առաջատարներից մեկը դառնալ՝ ընձեռելով լավագույն հնարավորություններ երեխաների առողջ, ազատ ու ներդաշնակ զարգացման համար:

Նպատակը՝ ստեղծել անվտանգ և առողջ միջավայր, որը հնարավորություն կտա երեխաներին ձեռք բերել մտավոր, հոգևոր և ֆիզիկական զարգացմանը նպաստող գիտելիքներ և սոցիալական հմտություններ:

# ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

## ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ ՓՈՂՈՑԻ 55/25 ՀԱՍՑԵՈՒՄ`

**31,841 Մ²**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ



# ՈՒՍՀ-ՈՒՄ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ՝

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

- հայկական կրտսեր 1-ին խումբ (2-3 տ.)
- հայկական կրտսեր 2-րդ խումբ (3-4 տ.)
- ռուսական կրտսեր 2-րդ խումբ (3-4 տ.)
- հայկական միջին խումբ (4-5 տ.)
- ռուսական միջին խումբ (4-5 տ.)
- հայկական ավագ խումբ (5-6 տ.)
- ռուսական ավագ խումբ (5-6 տ.)

## ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

- փակ սահադաշտ
- մարզասրահ
- լողավազաններ
- խաղային ձևերի դահլիճներ
- բաց խաղահրապարակ

## ԴՊՐՈՑ

- տարրական դպրոց (1-4 դաս.)
- հիմնական դպրոց (5-9 դաս.)
- ավագ դպրոց (10-12 դաս.)


ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ


ԴՊՐՈՑ


ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

# ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ



## ԿԱՐԵՆ ՄՈՎՍԵՍՅԱՆ

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Գլխավոր տնօրենի տեղակալ ֆինանսների և էկոնոմիկայի գծով



## ՌՈԲԵՐՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ՔՎԱՆՏ» վարժարանի տնօրեն



## ՀԵՂԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՊՄՀ Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան



## ՍԱՄՎԵԼ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ**

ԵՊՀ ՏՏ կրթական և հետազոտական կենտրոնի տնօրեն



## ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ-Ռուս. համալսարանի ֆիզկուլտուրայի և առողջապրելակերպի ամբիոնի վարիչ

ՀԱՕԿ փոխնախագահ

# ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



## Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Խորհրդի նախագահ,*
*«Գազպրոմ Արմենիա»*
*ՓԲԸ ՈՒՍՀ տնօրեն*



## Ե. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

*ՈՒՍՀ տնօրենի տեղակալ*
*ուսումնական և*
*դաստիարակչական*
*աշխատանքների գծով*



## Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

*ՈՒՍՀ դպրոցի ուսումնական*
*աշխատանքների*
*պատասխանատու*



## Է. ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

*ՈՒՍՀ դպրոցի ուսումնական*
*աշխատանքների*
*պատասխանատու*



## Ա. ԱՎԱԳՅԱՆ

ՈԻՍՀ դպրոցի Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ



## Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈԻՍՀ դպրոցի Բնագիտության ամբիոնի վարիչ



## Թ. ԱՌՈՒՇԱՆՈՎԱ

ՈԻՍՀ դպրոցի Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ



## Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՈԻՍՀ դպրոցի Հումանիտար գիտությունների ամբիոնի վարիչ



## Ս. ՇԱՀԻՆՅԱՆ

ՈԻՍՀ դպրոցի Մաթ. և ֆիզիկայի ամբիոնի վարիչ



## Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ՈԻՍՀ դպրոցի Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ



## Ի. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ

ՈԻՍՀ դպրոցի Օտար լեզուների ամբիոնի վարիչ

# ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ՝ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՎ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒՂՂՎԱԾ Է ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ՀԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ։

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՎԱԾ ԾՐԱԳԻՐՆ ԻՐ ՄԵՋ ՆԵՐԱՌՈՒՄ Է՝

## ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

- ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
- ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ
- ԵՍ ՃԱՆԱՉՈՒՄ ԵՄ ԱՇԽԱՐՀԸ
- ՌՈՒՍԵՐԵՆ
- ԱՆԳԼԵՐԵՆ
- ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ
- ՀՄՈՒՏ ՁԵՌՔԵՐ
- ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ
- ԼՈՂ/ԳԵՂԱՍԱՀՔ
- ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ
- ՊԱՐ

# ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՈՒՍՀ-Ի ԵԶԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԲՈԼՈՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԲԱԶՄԱԶԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ։
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԻՄՆՎԱԾ Է ՈՒՍԱՆՈՂԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ։ ՄԵՐ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ ՈՐՊԵՍ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ։

**ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

**ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԽՈՐԱՑՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ**

**ՊԱՐՏԱԴԻՐ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ**

1- ՄՏԱՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2- ՀՈԳԵՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

3- ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՀԱՄԱՐ ԴՊՐՈՑՆ ՈՒՆԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

## 1 ՄՏԱՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ՖՐԱՆՍԵՐԵՆ
- ՉԻՆԱՐԵՆ
- ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ
- ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ
- ՌՈԲՈՏԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ
- ԳԵՐՄԱՆԵՐԵՆ
- ԻՍՊԱՆԵՐԵՆ
- ՄԵՆԹԱԼ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
- ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
- ՄԻՆԻ ԲԱՍԿԵՏԲՈԼ

## 2 ՀՈԳԵՎՈՐ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ԽՈՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
- ՀԱԳՈՒՍՏԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ
- ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ
- ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ
- ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ
- ԽԵՑԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## 3 ՖԻԶԻԿԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

- ՖՈՒՏԲՈԼ
- ՇԱԽՄԱՏ
- ԳԵՂԱՍԱՀՔ
- ԼՈՂ
- ՊԱՐ
- ԲԱՍԿԵՏԲՈԼ
- ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍ
- ՀՈԿԵՅ
- ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

# ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ



83 ՏՂԱ
90 ԱՂՋԻԿ

52 % 48 %




- ԿՐՏՍԵՐ 1-ԻՆ ԽՈՒՄԲ (2-3 տ.)
- ԿՐՏՍԵՐ 2-ՐԴ ԽՈՒՄԲ (3-4 տ.)
- ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ (4-5 տ.)
- ԱՎԱԳ ԽՈՒՄԲ (5-6 տ.)
- ՌՈՒՍ. ԿՐՏ. 2-ՐԴ ԽՈՒՄԲ (3-4 տ.)
- ՌՈՒՍ. ՄԻՋԻՆ ԽՈՒՄԲ (4-5 տ.)
- ՌՈՒՍ. ԱՎԱԳ ԽՈՒՄԲ (5-6 տ.)

45 % 55 %

325 ՏՂԱ
270 ԱՂՋԻԿ

38 ԴԱՍ.
=
595 ԱՇ.




- ՏԱՐՐԱԿԱՆ
  20 ԴԱՍԱՐԱՆ
  (389 ԱՇԱԿԵՐՏ)

•I դասարան - 5
•II դասարան - 6
•III դասարան - 5
•IV դասարան - 4

- ՄԻՋԻՆ
  11 ԴԱՍԱՐԱՆ
  (162 ԱՇԱԿԵՐՏ)

•V դասարան - 2
•VI դասարան - 3
•VII դասարան - 2
•VIII դասարան - 2
•IX դասարան - 2

- ԱՎԱԳ
  7 ԴԱՍԱՐԱՆ
  (44 ԱՇԱԿԵՐՏ)

•X դասարան - 3
•XI դասարան - 3
•XII դասարան - 1

# ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՆԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
21 ՍԱՆ

ԱՄՆ
6 ՍԱՆ

ՂԱԶԱԽՍՏԱՆ
4 ՍԱՆ

ՎՐԱՍՏԱՆ
1 ՍԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ
1 ՍԱՆ

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ
1 ՍԱՆ

ՈՒԿՐԱԻՆԱ
1 ՍԱՆ

# ԴՊՐՈՑԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
68 ԱՇԱԿԵՐՏ

ԱՄՆ
10 ԱՇԱԿԵՐՏ

ՖՐԱՆՍԻԱ
3 ԱՇԱԿԵՐՏ

ՇՎԵՅՑԱՐԻԱ
3 ԱՇԱԿԵՐՏ

ՆԻԴԵՌԼԱՆԴՆԵՐ
3 ԱՇԱԿԵՐՏ

ԳԵՐՄԱՆԻԱ
2 ԱՇԱԿԵՐՏ

ԼԻԲԱՆԱՆ
2 ԱՇԱԿԵՐՏ

ԻՐԱՆ
2 ԱՇԱԿԵՐՏ

ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
1 ԱՇԱԿԵՐՏ

ՀՈՐԴԱՆԱՆ
1 ԱՇԱԿԵՐՏ

ՈՒԿՐԱԻՆԱ
1 ԱՇԱԿԵՐՏ

ՉԵԽԻԱ
1 ԱՇԱԿԵՐՏ

ԻՍՐԱՅԵԼ
1 ԱՇԱԿԵՐՏ

ՂԱԶԱԽՍՏԱՆ
1 ԱՇԱԿԵՐՏ

ՍԻՐԻԱ
1 ԱՇԱԿԵՐՏ

ԻՍՊԱՆԻԱ
1 ԱՇԱԿԵՐՏ

ՀՈՒՆԱՍՏԱՆ
1 ԱՇԱԿԵՐՏ

# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ԿԱԶՄԵԼ Է 253 ԱՇԽԱՏԱԿԻՑ ԵՎ 182,5 ԴՐՈՒՅՔ, ՈՐԻՑ

| ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ | ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿ | ԴՐՈՒՅՔ |
|---|---|---|
| ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍ | 32 | 29 |
| ԴՊՐՈՑ | 156 | 98,5 |
| ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ | 44 | 36 |
| ՄԱՐԶԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ | 14 | 12,5 |
| ՓԱԿ ՍԱՀԱԴԱՇՏ | 7 | 6.50 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 253 | 182,5 |

ՀԻՄՆԱՐԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՑ 34-Ը ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԵՆ, ՈՐՈՆՑԻՑ 29-Ն ԸՆԴԳՐԿՎԱԾ ԵՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ 5-Ը ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ:

# 2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

**ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔ 38,6**

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

**253**

253
253
253

**ԿԱՆԱՅՔ 197**

77.87%

**ՏՂԱՄԱՐԴԻԿ 56**

22.13%

# ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐ. 2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ

## ՄԱՐԶՉԱԿԱՆ ԿԱԶՄ

- **6** — ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ ★★★★★
- **2** — ՍՊՈՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՊԵՏ ★★★★★
- **2** — ՎԱՍՏԱԿԱՎՈՐ ՄԱՐԶԻՉ ★★★★★
- **2** — ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ★★★★★

# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ 2022-2023 ՈՒՍ. ՏԱՐՎԱ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ (ՀՀ ԴՐԱՄՈՎ)

| | 2021-2022 ՈՒՍ. ՏԱՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 2021-2022 ՈՒՍ. ՏԱՐԻ ԾԱԽՍԵՐ | 2022-2023 ՈՒՍ. ՏԱՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | 2022-2023 ՈՒՍ. ՏԱՐԻ ԾԱԽՍԵՐ |
|---|---|---|---|---|
| ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ | 28,132,688.7 | 271,905,777.1 | 48,546,860.1 | 415,178,380.5 |
| ԴՊՐՈՑ | 873,559,827 | 670,946,562.3 | 1,081,515,650 | 713,112,626.2 |
| ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ | 222,035,248 | 198,706,314.7 | 266,193,912 | 191,093,875.5 |
| ՍՊՈՐՏ | 117,326,697.4 | 232,632,462.5 | 152,266,046.7 | 179,681,763.5 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 1,241,054,461.1 | 1,325,425,932.1 | 1,548,522,468.8 | 1,501,473,288.8 |
| | -84,371,471.7 | | +47,049,180.1 | |

# ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

- ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՆԳԼԵՐԵՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԵՄԲՐԻՋԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ TKT (TEACHING KNOWLEDGE TEST) 3-ՐԴ ՄՈԴՈՒԼԻ («ԴԱՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ) ՔՆՆՈՒԹՅԱՆԸ, ՈՐՏԵՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԳՐԱՆՑԵՑԻՆ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ:
- ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՐՑԵՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ C1 ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆՁՆՈՒՄ:
- ՏԱՐՐԱԿԱՆ և ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՀԵՏևՅԱԼ ԹԵՄԱՆԵՐԻ ՇՈՒՐՋ.

✓ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍ ԵՎ ԳԵՐԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՎԱՐՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ:

✓ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՎԱՐՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ, ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԱՐԴԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

✓ ԱՈՒՏԻԶՄԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ,ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ, ԱՈՒՏԻԶՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ:

✓ ԹՎԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ: ԹՎԱՅԻՆ ԴԵՄԵՆՑԻԱ: ԹՎԱՅԻՆ ՊՍԵՎԴՈԴԵՄԵՆՑԻԱ:

✓ «ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԹՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ:

✓ ՖԵՆՈՄԵՆԱԿԵՆՏՐՈՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ:

# ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

## ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ. ՈՒԹ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ: ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ՝ ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԵՎ ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ:
- ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ:
- ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ: ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ:

## ՏՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

- ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԳՐԱՏԱԽՏԱԿԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԽԱՂԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ: ԱՌՑԱՆՑ ԹԵՐԹԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ, ԽՄԲԱԳՐՈՒՄ:
- ԲԱՌԱՅԻՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ԽԱՉԲԱՌԵՐԻ, ԼԱԲԻՐԻՆԹՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՔԱՌԱԿՈՒՍԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ:
- SMARTNOTEBOOK, ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԱՌՑԱՆՑ ԳՐԱՏԱԽՏԱԿԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ:
- ՏԱՐԲԵՐ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ H5P-Ի ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄ:

# ԿՐԹԱԹՈՇԱԿ



2020 ԹՎԱԿԱՆԻՑ ՈՒՍՀ-Ն ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ Է ՍԱՀՄԱՆԵԼ ԱՅՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՉՔԻ ԿԸՆԿՆԵՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՄԲ, ՍՊՈՐՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՈՎ:

## ՀՐԱՆՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ
## «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԿՐԹԱԹՈՇԱԿ
## ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ

# ՀՐԱՆՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ



**ՀԱՄՐԱԹՅԱՆ**
**ԷՐԻԿ** 7-ՐԴ ԴԱՍ.

# «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԿՐԹԱԹՈՇԱԿ



**ՓԱՐՎԱՆՅԱՆ ԱՐԱՅԻԿ** 6-ՐԴ ԴԱՍ.



**ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱԻԴԱ** 9-ՐԴ ԴԱՍ.



**ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷՐԻԿԱ** 9-ՐԴ ԴԱՍ.



**ՄԵՋԼՈՒՄՅԱՆ ԼԻՆԱ** 12-ՐԴ ԴԱՍ.

# ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ



ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԳԱԳԻԿ 5-ՐԴ ԴԱՍ.



ԱՍՐՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ 5-ՐԴ ԴԱՍ.



ԱՔՍՅԱՆ
ՆԱՏԱԼԻ 5-ՐԴ ԴԱՍ.



ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
ԱՐԵԳ 5-ՐԴ ԴԱՍ.



ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԷՎԱ 5-ՐԴ ԴԱՍ.



ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՎԻԿՏՈՐԻԱ 5-ՐԴ ԴԱՍ.

# ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ



**ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ** 7-ՐԴ ԴԱՍ.



**ՍԵՄԵՐՋՅԱՆ ԴԱՎԻԹ** 7-ՐԴ ԴԱՍ.



**ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ ՎԱՀԵ** 8-ՐԴ ԴԱՍ.



**ՖԱՆՅԱՆ ԱՆԻ** 11-ՐԴ ԴԱՍ.



**ԹՈՒՆՅԱՆ ԼԱՐԱ** 11-ՐԴ ԴԱՍ.



**ԴԱՐԲԻՆՅԱՆ ԼԻԱՆԱ** 11-ՐԴ ԴԱՍ.

# ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԹՈՇԱԿ



**ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ՎԱՀԵ** 11-ՐԴ ԴԱՍ.



**ՍԻՄՈՆՅԱՆ ՎԻԳԵՆ** 12-ՐԴ ԴԱՍ.

# ՆՇԱՆԱԿԱԼԻ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԵՑՕՐ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ Է, ԻՆՉՆ ԱՐԴՅՈՒՆՔ Է ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՋԱՆՔԵՐԻ ՄԵԿՏԵՂՄԱՆ՝ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՆՑԻԿ ՈՒ ԳՐԱՎԻՉ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ԼԻՆԵԼՈՒՆ: ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ԵՎՍ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՏԵՂԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՄԻ ՇԱՐՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՑՈՒՄ ԻՐԵՆՑ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՆԱԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ:



# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

**1.** 10-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐ ՎԱՀԵ ԹԱԴևՈՍՅԱՆԸ և ՎԻԳԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ ՇՈՒՐՋ **300** ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՅԱՑԱԾ ՄՐՑՈՒՅԹԻՆ՝ CODE BATTLE-ԻՆ, ԱՐԺԱՆԱՑԵԼ ԵՆ **«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՈԴ ԳՐՈՂ»** ՄՐՑԱՆԱԿԻ։

CODE BATTLE-Ը ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է FULL LEARNING ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ, ՈՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՂՆԵՐ ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ, ԱՅԼԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ, ԱՄՆ-ԻՑ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻՑ։



**2.** 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՍԱՆ ԷՐԻԿ ՀԱՄՐԱԹՅԱՆԸ **2023Թ.** ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ **«ՄԱԹԵՄԱՏԻԿԱ»** ԱՌԱՐԿԱՅԻՑ ՑՈՒՑԱԲԵՐԱԾ ԽՈՐԸ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է **2-ՐԴ ԿԱՐԳԻ ԴԻՊԼՈՄԻ։**



# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

**3.** 10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐ (ՖԻԶԻԿԱ–ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԻՑ) ԼԻԱՆԱ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ ՍԱՆԿՏ-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ՝ **«ՌՈՒՍԵՐԵՆԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ»** 3-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՂԹՈՂՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲՈՒՄ: ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎԸ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է **5000-Ը**, ԵՎ ՄԵՐ ՍԱՆԵՐԸ ԴԱՐՁԵԼ ԵՆ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻՑ , ՀԱՂԹՈՂՆԵՐ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲՈՒՄ՝ ՍՏԱՆԱԼՈՎ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ԴԻՊԼՈՄՆԵՐ:




**4.** ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՐՑԵՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՄԵՐ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՐԻՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ՝ **«ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ»** ԱՌԱՐԿԱՅԻՑ: ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ 3 ԺԱՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՑԱՆ 5 ՏԱՐԲԵՐ ԵՆԹԱԹԵՍՏԵՐ: ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՋՈՂՈՒԹԱՄԲ ՀԱՆՁՆԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ:**



# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ




**5.** ՄԵՐ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԼԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ, ՈՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՀԱՆԴԵՍ ԳԱԼ ՄԵՐ ԹԱՏԵՐԱԽՄԲՈՒՄ, **«ՆՌԱՆ ՀԱՏԻԿ»** ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ **22-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԻՆ** ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ **«ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՅՐԻԿ»**-Ի ԿԵՐՊԱՐԸ ԼԱՎԱԳՈՒՅՆՍ ՄԱՐՄՆԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:




**6.** 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏ ՍԱՄՎԵԼ ԴԱՎԹՅԱՆԸ ԻՏԱԼԻԱՅՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ **«HIPPO»** ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ ԶԲԱՂԵՑՐԵԼ Է **2-ՐԴ** ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆԸ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է **ԱՐԾԱԹԵ ՄԵԴԱԼՈՎ:**

# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

**7.** ՄԵՐ ԴՊՐՈՑԻ 6–ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏ ԷՐԻԿ ՀԱՄՐԱԹՅԱՆԸ ՃԱՆԱՉՎԵԼ Է **«ՕԺՏՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐ–ՔՎԱՆՏ 2023»** ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ։



**8.** ՄԵՐ ԴՊՐՈՑԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՍԱՆԵՐ ՀՐԱՆՏ ԳԵՈԼԵՑՅԱՆԸ ԵՎ ՆԱՏԱԼԻ ԱՔՍՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ **«ԿԵՆԳՈՒՐՈՒ 2023»** ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ՝ ԴԱՐՁԵԼ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐ։





# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

**9.** 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏ ԼԵՈ ՕՀԱՆՅԱՆԸ ԵՎ 6-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏ ԱԼԵՔՍ ՕՀԱՆՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ 2-ՐԴ ԲԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆԸ:




ԼԵՈՆ ԴԱՐՁԵԼ Է ԿԱՐԱՏԵԻ ԱՇԽԱՐՀԻ ՉԵՄՊԻՈՆ, ԿՐԿՆԱԿԻ ԳԱՎԱԹԱԿԻՐ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿՈՒՄԻ ՄՐՑԱՁԵՎՈՒՄ, ԻՍԿ ԱԼԵՔՍԸ ԶԲԱՂԵՑՐԵԼ Է 2-ՐԴ ՏԵՂԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿՈՒՄԻՏԵ ՄՐՑԱՁԱՈՒՄ ԵՎ 3-ՐԴ ՏԵՂԸ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՏԱ ՄՐՑԱՁԱՈՒՄ:



# ՆՎԱՃՈՒՄՆԵՐ

**10.** ՄԵՆՔ ԱՐԴԵՆ ՀՈԿԵՅԻ ԽՄԲԱԿ ՈՒՆԵՆՔ։
ՀՈԿԵՅԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՂ ՍՊՈՐՏԱՁԵՎ Է։
ՀՈԿԵՅ ԼԱՎ ԽԱՂԱԼՈՒ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ԵՆ՝
ԱՐԱԳՈՒԹՅԱՆ, ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՂՈՒՄԸ։ ՀՈԿԵՅԸ ՇԱՏ ՀԵՏԱՔՐՔԻՐ,
ԴԻՏԱՐԺԱՆ ԵՎ ԿՈՇՏ ՄԱՐԶԱՁԵՎ Է։









# ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



ՄԵՐ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ՆԱԽԱՇԵՄԻՆ ԿՐԿԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԷՐ ԱՐԴԵՆ ԱՎԱՆԴՈՒՅԹ ԴԱՐՁԱԾ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ-ՎԱՃԱՌՔ: ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԷԻՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՁԵՌԱԳՈՐԾ ԻՐԵՐԸ՝ ՆԿԱՐՆԵՐ, ԿԱՎԻՑ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՏՈՆԱԿԱՆ ԶԱՐԴԱՐԱՆՔՆԵՐ, ՈՐՈՆՑ ՎԱՃԱՌՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՈՂՋ ՀԱՍՈՒՅԹԸ ՓՈԽԱՆՑՎԵԼ Է «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ» ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ, «ԶԻՆՎՈՐԻ ՏՈՒՆ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ: ՆՇԵՆՔ, ՈՐ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ–ՎԱՃԱՌՔԻՑ ՍՏԱՑՎԵԼ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ 3 327 000 ՀՀ ԴՐԱՄ, ՈՐԻՑ ՄԵՐ ՍԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԿԱԶՄԵԼ Է 1 312 000 ՀՀ ԴՐԱՄ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐԱԾԸ՝ 2 015 000 ՀՀ ԴՐԱՄ:



# ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

**1**

ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԷՄԻՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԿԵՅԻ ԼԻԳԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԷՐ ԵՐԵՎԱՆՈՒՄ **«ՄՈՍԿՎԱՅԻ ՏՈՒՆ»** ՄՇԱԿՈՒԹԱԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ, ՈՐԻՆ ՆԵՐԿԱ ԷԻՆ ՀՈԿԵՅԻ ԼԻԳԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ, ՀՈԿԵՅԻ ԼԻԳԱՅԻ ՂԵԿԱՎԱՐ ՊՅՈՏՐ ԼԵԲԵԴԵՎԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ: ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՄԵՐ ՀԱՄԱԼԻՐԻ ԵՎ ՀՈԿԵՅԻ ԼԻԳԱՅԻ ՄԻՋԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ:





# ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

2

«ԱԶԳԱՅԻՆ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԵՐ ՀԱՄԱԼԻՐԻ ՍԱՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ՀՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՀՐԱՆՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ՀԵՏ, ՈՐ ՇՈՒՐՋ 6000 ՆԿԱՐԻ ՀԵՂԻՆԱԿ Է, ՈՐՈՆՑ ԹՎՈՒՄ ԵՆ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐ, ԲՆԱՊԱՏԿԵՐՆԵՐ, ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ, ՎԵՐԱՑԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ: ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՄԵՐ ՄԵԾԵՐԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԻՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼՈՒ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՃԱՇԱԿ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿ ՈՒՆԵՐ:





3

ՄԵՐ ՀԱՄԱԼԻՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ Ի ԴԵՄՍ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԳՈՐԾԻՉ, ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ՝ ԴՈԿՏՈՐ ՓՈՒԼ ՄԱՆՈՒԿ ԴԻՇՉԵՔԵՆԻԱՆԻՆ:



# ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

4

ՄԵՐ ՍԱՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷՐ ԳՐՈՂ, **«ԲԱԼԶԱԿ**. ՄԻ ՇԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԳՐՔԻ ՀԵՂԻՆԱԿ ԼԵՎՈՆ ՆԵՍԸ: ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԷՐ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ:
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ՀԵՏԱՔՐՔՈՂ ԲԱԶՄԱԹԻՎ ՀԱՐՑԵՐՆ ՈՒ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴՐԱԿԱՆ ՈՒ ՋԵՐՄ ՄԹՆՈԼՈՐՏ ԷԻՆ ՍՏԵՂԾԵԼ:



5

ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ԲՐԵՅՔ ԴԱՆՍ ԵՎ ՀԻՓ-ՀՈՓ ՊԱՐԱՈՃԵՐԻՆ: ԴԱՍԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ 4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՆԱԽ ԾԱՆՈԹԱՑԱՆ ՊԱՐԱՈՃԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՓՈՐՁԵՑԻՆ ՄԻԱՍԻՆ ՊԱՐԵԼ:
ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ ԷԻՆ **«ՍԱԼԻԼԵ»** ՊԱՐԻ ՍՏՈՒԴԻԱՅԻ ԲՐԵՅՔ ԴԱՆՍ ԵՎ ՀԻՓ-ՀՈՓ ՊԱՐԱՈՃԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՎԻԿԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԸ ԵՎ ՀՐԱՉ ԲՈՐՋՅԱՆԸ:



# ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ





**6**

ԵՊԲՀ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆԻ **«ՄԱՍՆԱԳԵՏ»** ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԷԻՆ ԲՈՒՀ: ԾՐԱԳՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՏԵՍԱԿԱՆ և ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ: ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՁԵՌՔԻ ՏԱԿ ԵՂԱԾ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՓՐԿԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ՝ ՄԻՆՉԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼԸ:

ՄԵՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՆԱԵՎ ԵՊԲՀ ԹԱՆԳԱՐԱՆ և **«ՔՈԲՐԵՅՆ»** ՈՒՂԵՂԻ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ, ՈՐՏԵՂ ՆՐԱՆՔ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՏԱՐԲԵՐ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ: ԾՐԱԳՐԻ ԱՎԱՐՏԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՍՏԱՑԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ:

**7**

ՀԱՆԴԻՊՈՒՄ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԴԵՐԱՍԱՆ ԱՂԱՍԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՀԵՏ: ԱՇԱԿԵՐՏԵՐՆ ԻՄԱՑԱՆ ՏԻԿՆԻԿՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՆՐԱՆՑ ՄԱՍԻՆ:



# ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

**8**

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ **«ՄԵԴԻԱԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»** ԱՌԱՐԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ։ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԾԱՆՈԹԱՑԵԼ ԵՎ ՀԵՏԵՎԵԼ ԵՆ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ, ՖԻԼՄԵՐԻ ՏԵՍԱՁԱՅՆԱԳՐՄԱՆԸ ԵՎ ԿՐԿՆՕՐԻՆԱԿՄԱՆԸ։ ՀԱՂՈՐԴԱՎԱՐՆԵՐԸ, ԼՐԱԳՐՈՂՆԵՐԸ, ՌԵԺԻՍՈՐՆԵՐՆ ՈՒ ՊՐՈԴՅՈՒՍԵՐՆԵՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԵՆ ՆԱԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏԱՔՐՔՐՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ։



**9**

ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱԶՄԸ՝ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳԼԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ, ՀԱՆԴԻՊԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՐՑԵՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ ԴՄԻՏՐԻ ՄԵՐԵՇԿԻՆԻ ՀԵՏ։ ՆՐԱՆՔ ՇՐՋԱՅՑ ԿԱՏԱՐԵՑԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ, ՏՆՕՐԵՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՀՅՈՒՐԻՆ ԾԱՆՈԹԱՑՐԵՑ ՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ։



# ՀՅՈՒՐԵՐ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ



**10**

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ-ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ԿՐԹԱՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ:

ՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՊԿ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ:

ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ ՀԵՏՈ Ա. ՀԱԿՈԲՅԱՆԸ ՇՐՋԵԼ Է ՀԱՄԱԼԻՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ԾԱՆՈԹԱՑԵԼ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ:



# ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԵՐ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ԴԱՐՁՎՈՒՄ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ-ԴՊՐՈՑ ԿԱՊԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ: ԴՊՐՈՑՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ՍՏԵՂԾԵԼ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ:

ԱՅԴ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ԵԼԵՆԱ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԹԱՄԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ: ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՑԱՎ ՋԵՐՄ ԵՎ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ: ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՐՑԵՐ, ՈՐՈՆՔ ԱՌՆՉՎՈՒՄ ԷԻՆ ՀԵՏԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ:



# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԵՎ ԳԼԻՈՆԻ ԵՎ ԼԵ ՌՈՇԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՄԻՋԵՎ 2021Թ.-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՑ 9-Ը ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑՈՎ ՄԵԿՆԵԼ Է ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՐՑԵՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՄԻՋԵՎ ՝ 2022Թ.-Ի ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ ԿՆՔՎԵԼ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ՌԴ ԱԳՆ ՄՈՍԿՎԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ (ՄՄՀՊԻ (МГИМО), Ի ԴԵՄՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ Ս.Ի.ՍՈՒՎՈՐՑԵՎԻ, ԵՎ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿՆ Ի ԴԵՄՍ ՏՆՕՐԵՆ Ա.Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ `2023Թ. -Ի ՄԱՅԻՍԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ԱՐՁԱՆԱԳՐԵԼՈՎ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ:


ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

# ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ

**Տևողությունը՝ 3 շաբաթ (հունիսի 5-23-ը)**

## Կրթական հավաքի հոսքերն են՝

*Հայագիտական - Ռուսական - Անգլիական*

- 3 շաբաթվա ընթացքում նշված ուղղվածության առարկայից (45 ժամ) թեմատիկ պարապմունք: Պարապմունքներն անց են կացվում ոչ ֆորմալ կրթության ձևաչափով՝ խաղային, ժամանցային, թիմային, համագործակցային ու ակտիվ ուսուցման մեթոդիկաներով և ոչ դասարանական ուսուցման պայմաններում:
- Լեզվամշակութային միջավայրի ստեղծում տվյալ ուղղությամբ:
- Հետազոտական աշխատանքի իրականացում՝ նշված ուղղության լեզվով:
- Համակարգչային գիտություն և ռոբոտաշինության դասեր:
- Էքսկուրսիաների կազմակերպում հետազոտական աշխատանքի թեմատիկայով:
- Ակտիվ խաղերի վարում:
- Թատերական ներկայացումների կազմակերպում:
- Խմբային քննարկումների կազմակերպում:
- Յուրաքանչյուր օր նախատեսվում է ֆիզիկական ակտիվություն (սպորտային ակտիվ խաղեր և/կամ լող):
- Ստեղծագործական ակտիվություններ (երգ/երաժշտություն, կերպարվեստ, խոհարարություն):
- Օրական 3-անգամյա սնունդ:

*Ամառային դպրոց հաճախող աշակերտների թիվը՝* ***43***

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ




ԹԱՏՐՈՆ

# ՄԵՐ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ»

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ «ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԸ»-Ի ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆ Ա. ՀԱԿՈԲՅԱՆՆ ՈՒ «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵՑԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՐԾԱԹԵ ԿՐԾՔԱՆՇԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԱԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ։ ՏՆՕՐԵՆՆԵՐԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻՆ՝ ՄԱՂԹԵԼՈՎ ԲԱՐԻ ԵՐԹ ԿՅԱՆՔԻ ՀԱՋՈՐԴՈՂ  ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐՈՒՄ։













# ՌԽՀ ԴՊՐՈՑԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐ

| Դպրոց | 2020/2021 | 2021/2022 | 2022/2023 |
|---|---|---|---|
| Տարրական դպրոց | 33 | 36 | 83 |
| Միջին դպրոց | 20 | 35 | 22 |
| Ավագ դպրոց | - | 5 | 7 |
| **Ընդամենը** | **53** | **76** | **112** |







ՀԱՅԱՍՏԱՆ, ԵՐԵՎԱՆ, Փ. ԾԱՐԱՎ ԱՂԲՅՈՒՐ 55/25
WWW.GAUS.AM
INFO@GAUS.AM

ԴՊՐՈՑ՝ +374 12-620-626
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ՝ +374 12-620-624
ՍԱՀԱԴԱՇՏ՝ +374 12-620-630
ՄԱՐԶԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ՝ +374 12 620-630